«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման Խոսքային հաղորդակցում

Առարկան Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ Աշոտյան Սեդա

Ուսումնական հաստատություն Վ. Բազմաբերդի հիմնական դպրոց

ԹԱԼԻՆ 2022

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Խոսքային հաղորդակցում ---------- 4

Եզրակացություն---------- 14

Օգտագործված գրականության ցանկ---------- 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ տեղեկատվության փոխանցման ձևերի՝ հաղորդակցումը դասակարգվում է. խոսքայինի, որի հիմնական միջոցներն են.

- բանավոր խոսք,
- գրավոր խոսք։

<u>Թեմայի կարևորությունը</u>: Դիրքը մարդու մարմնի որոշակի կեցվածքն է, որը հատկանշական է տվյալ կուլտուրայի համար. այն ցույց է տալիս, թե ինչպես է տվյալ մարդն ընկալում իր կարգավիճակը՝ ներկա մյուս անձանց կարգավիճակի համեմատությամբ։

<u>Թեմայի նպատակը</u>: Մարդիկ ցանկացած պահի խոսում են ոչ միայն լեզվով, այլև ժեստերի լեզվով։ Ժեստեր–Ձեռքի, գլխի, մարմնի շարժումներ են (ֆրանսերեն՝ժեստ-գործողություն)։ Որքան էլ տարբերվեն կուլտուրաները, ամենուր հուզվածության աճի հետ աճում է նաև ժեստիկուլյացիայի ինտենսիվությունը։ Ժեստերի մի մասի կոնկրետ իմաստը տարբեր կուլտուրաներում տարբեր է։ Սակայն բոլոր կուլտուրաներում կան ժեստեր, որոնց նշանակությունը նույնն է։

Բանավոր խոսք։ Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական–արտասանական իրացում։ Այն հիմնականում բարձրաձայն խոսակցություն է. կարելի է ձայնագրել ու վերարտադրել, հաղորդել տեխնիկական միջոցներով /հեռախոս, ռադիո/։

Գրավոր խոսք։ Գրավոր խոսքը գրի առնված, գրավոր տեքստի վերածված խոսքն է. իրացվում է գրային պայմանական նշանների գործադրումով /ձեռքով/, ընկալվում է տեսողությամբ կամ շոշափելիքով։ Այս դեպքում խոսքային իրադրություն ստեղծվում է մտովի, ոչ իրականում։ Զուրկ է բանավորին հատուկ կառուցվածքային ու ոճաարտահայտչական հնչերանգային որոշ հատկանիշներից։ Կարևոր դեր են ստանում գրության եղանակները, կետադրությունը։

Հաղթահարում է բանավոր խոսքի ժամանակային ու տարածական սահմանափակությունները։ Ոչ բանավոր հաղորդակցություն։ Մեր առօրյա կյանքում հաղորդակցությունն ընդունում է տարբեր ձևեր և պատահում է տարբեր միջավայրերում։

Խոսքային հաղորդակցում

Խոսքային հաղորդակցման հիմնական խնդիրը տեղեկատվության հաղորդումն է ժամանակի և տարածության մեջ՝ ապահովելով շփումը, կապը կողմերի միջև, տեղեկատվության փոխանակումը: Այն կարող է լինել միակողմանի, երկկողմանի (պայմանագիր), բազմակողմանի /օրենքներ/:

Հայտնի է, որ հաղորդակցությունը մարդկային կյանքի կարևոր կենսաբանական պայմաններից է: Մարդիկ չեն կարող ապրեկ առանց միմյանց հետ շփման: Առանց շփման չէր լինի հասարակություն, չէր կարող լինել ազգ, ժողովուրդ, մշակույթ և ընդհանրապես զարգացում: Էլ չենք խոսում այն մասին, թե ինչքան կարևոր են միջազգային, միջպետական, միջմշակութային շփումները:

Սույն աշխատանքում ներկայացնում ենք մարդկային հաղորդակցության ձևերը Շեֆլինի ուսմունքի վերլուծությամբ՝ շեշտը դնելով ոչ խոսքային հաղորդակցության, նրա առանձնահատկությունների վրա:

Մի պահ պատկերացնենք, թե մարդիկ հանկարծ դադարեն խոսելուց, մոռանան լեզուն: Այդ դեպքում նրանք այլևս չեն կարողանա հարց տալ, պատասխան ստանալ, չեն կարողանա իրար հասկանալ: Կանգ կառնեն փոխադրամիջոցները, կդադարի աշխատանքը: Այսինքն՝ կյանքը հասարակության մեջ կանգ կառնի, քանի որ մարդկանց գործունեությունը կարգավորվում է փոխադարձ հաղորդակցության միջոցով:

Ոչ խոսքային շփումը մարդկության տարեկիցն է: Միլիոնավոր տարի առաջ արված քարանձավային փորագրություններում պատկերված են մարմնի շարժումների օգնությամբ իրենց էմոցիաները՝ ապրումները, հույզերը արտահայտող մարդիկ: Կնշանակի, ոչ վերբալ շփումը շրջանառության մեջ է մտել վերբալ հաշփումից դեռ շատ առաջ, իսկ էվոլյուցիայի արդյունքում, ավելի ուշ երեւան եկած խոսքը դարձել է փաստերի ու կոնկրետ երեւույթների ավելի ստույգ փոխանցման միջոց:

Ոչ խոսքային շփման տեսական եւ կիրառական ուսումնասիրությունը սկսեց զարգանալ անցյալ դարի կեսերից, որի շնորհիվ աստիճանաբար բացահայտվեցին այդ տիպի շփման «գաղտնիքները»:

Հաղորդակցումը բարդ գործընթաց է,որն ունի իր կառուցվածքը, բաղադրատարրերը, մեխանիզմները, գործընթացային փուլերը և կողմերը:

Հաղորդակցման գործընթացի կառուցվածքային տարրերն են՝

-հաղորդակցման սուբյեկտները,

-հաղորդակցման միջոցները,

-հաղորդակցման պահանջմունքները,շարժառիթները և նպատակները,

-հաղորդակցման ընթացքում փոխներգործության ու փողազդեցության, ընկալման ու փոխըմբռնման մեխանիզմները,

-հաղորդակցման արդյունքները:

Հաղորդակցման սուբյեկտները մարդիկ են: Հաղորդակցումը կարող է տեղի ունենալ առնվազն երկու և ավելի մարդկանց միջև:Հաղորդակցվում են առանձին մարդիկ՝սուբյեկտները,իսկ այդ հաղորդակցության բնույթը կախված է այն բանից, թե ինչպիսի հարաբերություն գոյություն ունի նրանց միջև: Այս իմաստով այն կարող է ունենալ սուբյեկտ-սուբյեկտ և սուբյեկտ-օբյեկտ կառուցվածքը: Առաջին դեպքում հաղորդակցվող անձինք իրար վերաբերում են որպես սուբյեկտների, իսկ երկրորդ դեպքում ՝ որպես օբյեկտի, այսինքն՝ որպես միջոցի և գործիքի: Ելնելով հաղորդակցման բնույտից,կարող ենք նշել,որ հաղորդակցվողներից յուրաքանչյուրը կարող է նիաժամանակ դիտվել և՛ որպես սուբյեկտ, և՛ որպես օբյեկտ: Որպես սուբյեկտ նա ճանաչում է իր գործընկերոջը, արտահայտում է իր վերաբերմունքը նրա հանդեպ և այլն: Միաժամանակ նա հանդես է գաիս որպես ճանաչողության օբյեկտ նրա համար, ում հետ հաղուրդակցվում է:

«Գաղտնազերծումը» իր հետեւանքներն ունեցավ սոցիալ-հասարակական եւ մշակութային կյանքում: Օրինակ, այն դերասանները, որոնք ի վիճակի չեղան համադրել ոչվերբալ եւ վերբալ շփումների հնարավորությունները, բախվեցին լուրջ դժվարությունների հետ: Արդյունքում՝ հանդիսատեսը սկսեց մոռանալ նրանց: Այդպես եղավ, համենայն դեպս, հայ կինոյում: Չարլի Չապլինը, Մերի Պիկֆորդը, Իգոր Իլյինսկին բացառություններ էին: Ոչ վերբալ շփումը հատուկ տեղ է գրավում մշակույթում: Վերցնենք Ֆրանսիան: Մինչեւ 1789 թ. ֆրանսիացիների մեծ մասը խոսում էր տեղական բարբառով («patois», ֆրանս.) եւ բոլորովին չէր հասկանում փարիզյան դիալեկտը: Մեծ կատակերգակ Մոլիերը, լինելով բեմական արվեստի ռեֆորմատոր, գտավ սրամիտ լուծում: Նա իր թատերախմբով հյուրախաղային շրջագայությունների ժամանակ բեմադրում էր կատակերգություններ, որոնցում մեծ

տեղ էր հատկացվում համր, գրոտեսկի հասնող տեսարաններին, եւ ինքն էլ որպես դերասան մասնակցում էր դրանց: Հետո հատուկ դեկրետով «patois»-ն արգելվեց եւ չենթարկվողները հեղափոխական անողոքությամբ սկսեցին գլխատվել բժիշկ-նորարար Գիլյոտինի հնարած սարքավորման օգնությամբ, որն, ինչպես պնդում էր Հիպոկրատի արեւով երդված հումանիստը, մարդկանց այն աշխարհ էր ուղարկում գրեթե անցավ՝ կայծակնային արագության հաշվին:

Ոչ խոսքային շփման ամենաբարդ և ամենանուրբ ձևերից մեկը՝ և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական առումով, հպումն է: Այն կատարվում է մարդու ամենամեծ օրգանի՝ մաշկի միջոցով, որը կազմում է նրա քաշի 15%-ը:

Մենք հաճախ ականատես ենք լինում, թե ինչպես մարդիկ շփվելիս շփվում են ֆիզիկապես՝ օգտվելով հպման տարբեր ձևերից և միջոցներից, որոնք մենք պայմանականորեն անվանում ենք կապի նշաններ:

Դիմացինի հետ ֆիզիկական շփման մտնելը լուրջ գործողություն է՝ լինի գիտակցված շփում, բարեկամական հպում, սիրային փաղաքշանք, թե ագրեսիվ հարձակում:

Երբ մենք խոսում էինք անհատի տարածքի կամ զոնայի մասին, նշեցինք, որ մարդիկ այն աչալրջորեն պահպանում են: Նշեցինք նաև, որ զոնայի անձեռնմխելիության և ֆիզիկական շփումների միջև գոյություն ունի մշտական կոնֆլիկտ (բախում): Իսկ եթե այդ կոնֆլիկտը չի սրվում, այլ հարթվում է, և մարդիկ չեն հեռանում իրարից, ապա հանդես են գալիս տարբեր տիպերի բարեկամական շփումներ, այսինքն հպումներ՝կապի տարբեր նշանների արտահայտությամբ:

Ոչ խոսքային շփման խոշորագույն գիտակ Դեսմոնդ Մորիսը հայտնաբերել է հպման 457 տեսակ, որոնց մեծ մասը հազվադեպ է հանդիպում: Նա դասակարգել է ամենատարածված շփումները՝ անվանելով դրանք «սոցիալական հպումներ», ինչպես, օրինակ, ձեռքսեղմումը, ուղղորդումը (թեթևակի դիպչելով դիմացինին՝ ճանապարհ հուշել), ուսին թփթփացելը, ուսը գրկելը, գրկախառնությունը, մեջքը գրկելը, փաղաքշանքը, թևանցուկ անելը, երեխաների կատակային քաշկռտուքները, համբուրվելը և այլն:

Ոչ խոսքային շփումը իր մեջ ներառում է մի քանի տարատեսակ. կինեստետիկ, պարալինգվիստիկ և էքստրալինգվիստիկ, կոմունիկատիվ գործընթացի ժամանակա-

տարածային կազմակերպում, վիզուալ կոնտակտ։ Վերբալ շփման ժամանակ որպես նշանային համակարգ և տեղեկատվության կոդավորման միջոց օգտագործվում է խոսքը։

Ոչ վերբալ շփումը կարող է տեղի ունենալ ինչպես գիտակցական, այնպես էլ ենթագիտակցական մակարդակների վրա։ Մի դեպքում, կոմունիկատորը կարող է անգիտակցական ազդակներ հղել ռեցիպիենտին, վերջինս էլ անգիտակցականորեն ըմբռնել դրանք, մյուս դեպքում, ոչ վերբալ ինֆորմացիան կարող է գիտակցվել հաղորդակիցներից միայն մեկի կողմից, ինչպես նաև այն կարող է գիտակցվել շփման բոլոր մասնակիցների կողմից։ Ոչ վերբալ շփման միջոցներից են ժեստերը, դիմախաղը, պանտոմիմիկան, որոնք օգտագործվում են օպտիկո-կինետիկ նշանների համակարգի շնորհիվ։ Սրանց միջոցով արտահայտվում է խոսակցի վերաբերմունքը, հույզերն ու ապրումները, փոխանցվում են որոշակի մտքեր։ Օպտիկո-կինետիկ շփման միջոցները ունեն ինչպես պատմա-էվոլյուցիոն, այնպես էլ մշակութային ծագում։ Դա ապացուցվում է նրանով, որ գոյություն ունեն տարբեր ազգերի համար թե ընդհանուր, թե տարբեր, հաճախ անգամ հակադիր, իմաստներով շարժումներ և ժեստեր։ Նշանների պարալինգվիստիկ և էքստրալինգվիստիկ համակարգերը նույնպես լրացնում են խոսքային շփումը։ Պարալինգվիստիկ համակարգը վերաբերում է ձայնի որակին, դիապազոնին, տոնայնությանը, իսկ էքստրալինգվիստիկը՝ խոսքի մեջ ներառված դադարները, հազը, լացը, ծիծաղը, խոսքի տեմպը և այլն։ Այս լրացումները շեշտում են տեղեկատվության նշանակալիությունը, դրա իմաստը։ Շփման տարածության և տեղի կազմակերպումը նույնպես ազդում է կոմունիկատիվ գործընթացի վրա, կրում է իմաստ և համարվում է հաղորդակցման իրավիճակի բաղկացուցիչ մաս։ Դրա մեջ մտնում է, ինչպես վայրը, որտեղ տեղի է ունենում շփումը, այնպես էլ հաղորդակցվողների միջև եղած հեռավորությունը, նրանց տեսքը, նստելու կամ կանգնելու դիրքը։ «Աչքերի կոնտակտը» նույնպես հանդես է գալիս որպես նշանային համակարգի կրող։ Աչքերի արտահայտության միջոցով փոխանցված տեղեկատվությանը մեծ նշանակություն է տրվում շփման ընթացքում։ Նաև որոշ հետազոտողներ ոչ վերբալ հաղորդակցման մեթոդների շարքին են դասում տակտիլ և օլֆակտոր գործոնները, որոնք առկա են

լինում շփման ժամանակ, այսինքն՝ հպումները և շրջակա միջավայրի հաճելի և տհաճ հոտերը:

Ոչ խոսքային հաղորդակցման ժամանակ շփման գործիք է դառնում մարդու մարմինը, որն ունի արտահայտչական մեծ պոտենցիալ և տեղեկատվության փոխանցման տարատեսակն միջոցներ, ինչով բացատրվում է այն փաստը, որ տեղեկատվության 60-70%-ը շփման ընթացքում մարդիկ փոխանցում են «մարմնի լեզվի» շնորհիվ:

Ոչ խոսքային հաղորդակցության ամենաբարդ և ամենանուրբ ձևերից մեկը՝ և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական առումով, հպումն է: Այն կատարվում է մարդու ամենամեծ օրգանի՝ մաշկի միջոցով, որը կազմում է նրա քաշի 15%-ը:

Մենք հաճախ ականատես ենք լինում, թե ինչպես մարդիկ հաղորդակցվելիս շփվում են ֆիզիկապես՝ օգտվելով հպման տարբեր ձևերից և միջոցներից, որոնք մենք պայմանականորեն անվանում ենք կապի նշաններ:

Դիմացինի հետ ֆիզիկական շփման մտնելը լուրջ գործողություն է՝ լինի գիտակցված շփում, բարեկամական հպում, սիրային փաղաքշանք, թե ագրեսիվ հարձակում:

Երբ մենք խոսում էինք անհատի տարածքի կամ զոնայի մասին, նշեցինք, որ մարդիկ այն աչալրջորեն պահպանում են: Նշեցինք նաև, որ զոնայի անձեռնմխելիության և ֆիզիկական շփումների միջև գոյություն ունի մշտական կոնֆլիկտ (բախում): Իսկ եթե այդ կոնֆլիկտը չի սրվում, այլ հարթվում է, և մարդիկ չեն հեռանում իրարից, ապա հանդես են գալիս տարբեր տիպերի բարեկամական շփումներ, այսինքն հպումներ՝կապի տարբեր նշանների արտահայտությամբ:

Ոչ խոսքային հաղորդակցության խոշորագույն գիտակ Շեֆլինը հայտնաբերել է հպման 457 տեսակ, որոնց մեծ մասը հազվադեպ է հանդիպում: Նա դասակարգել է ամենատարածված շփումները՝ անվանելով դրանք «սոցիալական հպումներ», ինչպես, օրինակ, ձեռքսեղմումը, ուղղորդումը (թեթևակի դիպչելով դիմացինին՝ճանապարհ հուշել), ուսին թփթփացելը, ուսը գրկելը, գրկախառնությունը, մեջքը գրկելը, փաղաքշանքը, թևանցուկ անելը, երեխաների կատակային քաշկռտուքները, համբուրվելը (համբույրի թեմային մենք առանձին կանդրադառնանք) և այլն:

Գոյություն ունեն մի շարք մասնագիտական բնույթի հպումներ, որոնցից օգտվում են բժիշկները, ատամնաբույժները, հոգևորականները, վարսավիրները, մերսողները և այլ մասնագետներ, որոնք գործի բերումով այդկերպ են հաղորդակցվում մարդկանց հետ:

Թե ինչ եղավ, երբ պրեմիեր-մինիստրը գրկեց թագուհուն

Եթե դիմացինին վատ գիտեք կամ լավ չեք ճանաչում, զգուշացեք նրան հպվելուց կամ դիպչելուց: Արևմտյան շատ մշակույթներում նման պահվածքը կարող է դիտվել որպես սեքսուալ ոտնձգություն՝ անցանկալի հետևանքներով:

Հպումը սիմետրիկ է (հավասարաչափ) սիրահարների մոտ: Թող հպվեն, որքան ուզում են: Ինչքան շատ, այնքան լավ: Եթե երիտասարդները հասնում են փոխըմբռնման, տեղի է ունենում հպում: Սկզբում՝ գրեթե պատահական, աննշան: Մասնագետների կարծիքով՝ անգամ թեթև հպումը ձեռքին նոր որակ է հաղորդում հաղորդակցությանը: Եթե պայմանները թույլ չեն տալիս, ապա նրանք դիպչում են միմյանց անշունչ առարկաներին: Հայտնի է, որ մարդիկ, ինչպես նաև պրիմատները, առաջին հերթին պաշտպանում են գլուխը:Եվ երբ սիրահարները շոյում են մեկմեկու գլուխները, նշանակում է՝ հասել են կատարյալ փոխըմբռման և փոխվստահության:[1]

Նմանակումը շատ հեշտ ու պարզ երևույթ է, որը ներառում է դիմացինի ոչ վերբալ հաղորդակցության ազդանշանները՝ ներառյալ հնչյունները, ձայնի բարձրությունը և խոսելու տոնը: Պատկերավոր ասած՝ դուք դառնում եք զրուցակցի արձագանքը:

Այսպիսով, թեև մարդկանց անմիջական շփումը չափազանց կարևոր Է և անհրաժեշտ, բայց այն ունի որոշակի սահմանափակություն: Բանն այն Է, որ անմիջական շփման դեպքում մարդը չի կարողանում դուրս գալ միկրոմիջավայրի շրջանակներից: Իսկ միկրոմիջավայրը չի կարող լինել անձի ձևավորման հիմնական գործոն, թեպետ նրա բնույթը և, հետևաբար, մարդկանց սոցիալական հոգեբանության մեջ նրա արտացոլման առանձնահատկությունները կախված են, վերջին հաշվով, ընդհանուր հասարակական հարաբերություններից:

Ուղղակի շփումը մարդուն հնարավորություն չի տալիս ճանաչելու իր հասարակական կյանքը և նրա օրինաչափությունները, տիրապետելու

[1] 1.Նալչաջյան Ա. << Հոգեբանության հիմունքներ>>, Երևան 1991թ.
2.Պետրովսկի Ա. Վ. << Ընդհանուր հոգեբանություն>>, Երևան 1974թ.
3.Карл Кениг, Георг Фон Арним, "Понимание речи и лечение речи", 2013

հասարակության կողմից ստեղծված հոգևոր արժեքները, գնահատելու իրեն՝ որպես որոշակի սոցիալական հանրության մասնիկ։ Անմիջական հաղորդակցման շնորհիվ մարդը ճանաչում է միայն շոշափելիորեն ընկալվող երևույթները, իրավիճակները, փաստերը և յուրացնում միայն իրեն անմիջականորեն շրջապատողմարդկանց գիտելիքները, փորձը, հմտությունները և այլն։

Եթե անմիջական շփման պրոցեսում անձը իր գործունեությունը կարգավորում է վարքագծի խմբային նորմերին համապատասխան, ապա մասսայական հաղորդակցման հետևանքով մարդը յուրացնում է նաև այն նորմերը, սկզբունքներն ու կանոնները, որոնց օգնությամբ նա պետք է կազմակերպի իր վարքագիծը՝ ելնելով ողջ հասարակության շահերից։ Որպես անձի սոցիալականացման պրոցեսի կարևորագույն մոմենտ, մասսայական հաղորդակցումն ազդում է նրա միասնական ներքին կառուցվածքի ձևավորման և դրա շնորհիվի նաև սոցիալական վարքի վրա։

Խոսքային գործունեության ֆիզիոլոգիական հիմքը մի քանի ֆունկցիոնալ համակարգությունների բարդ կազմավորում է, որոնցից մի քանիսը մասնագիտացված են որպես խոսքային, իսկ մյուսները «սպասարկում» են գործունեության այլ տեսակների։ Այդ կազմավորումներին մասնակցում են ինչպես «ագդակ-հակագդում» տիպի պարզագույն ֆիզիոլոգիական, այնպես էլ առանձնահատուկ մեխանիզմներ, որոնք հիերարխիկ կառուցվածք ունեն և բնորոշ են բացառապես խոսքային գործունեության բարձրագույն ձևերի համար, ինչպիսին է խոսքային արտահայտության ներքին ծրագրավորման մեխանիզմը։

Լեզվաբանությունը խոսքն ուսումնասիրում է որպես «լեզու-խոսք» երկու հիմնական կատեգորիաներից մեկը, նրանց միասնության և հակադրության մեջ։ Խոսքը լեզվի հասարակական գործառությունների՝ մտածողության ու մտքերի հաղորդակցման միջոցների իրացումը, դրսևորումն է։ Այս առումով խոսքի և լեզվի միջև կա մասնավորի և ընդհանուրի, կոնկրետի և վերացականի փոխհարաբերություն. դիալեկտիկական այդ հակադրամիասնության մեջ խոսքը մասնավորն է, կոնկրետը, իսկ լեզուն՝ ընդհանուրը, վերացականը։

Լեզվի հասարակական դերի իրացումը կատարվում է անհատների միջոցով, ուստի և խոսքն իր դրսևորման եղանակով, ոճական և այլ կողմերով կրում է անհատական բնույթ, այդուհանդերձ խոսքն իր հիմքով նույնպես հասարակական է։

Խոսքը մարդուն հատուկ հոգեբանական-ֆիզիոլոգիական գործունեության արտահայտություն է, ուստի նրա իրացումը լրիվ ավտոմատացված է, իսկ բովանդակության առումով նրա մեջ իշխում է գիտակցականը։ Խոսքը, ըստ գործառության բնույթի, լինում է բուն կամ արտաքին, որով խոսողը իր միտքն է հաղորդում ուրիշին, և ներքին, որը չի հաղորդվում, այլ մտածական ներքին գործունեություն է և անհատի համար ունի ճանաչողական արժեք, որպես լեզվի մտածական դերի ներքին դրսևորում։ Ներքին խոսքն հիմնականում կառուցվում է արտաքին խոսքի սկզբունքով՝ հաճախ պատկերների և այլ լրացուցիչ միջոցների օգտագործումով։

Ըստ դրսևորման եղանակի Խոսքը լինում է բանավոր և գրավոր։ Բանավոր խոսքը լեզվի բնական արտահայտությունն է, որը իրացվում է արտասանական գործարանների շնորհիվ և լսելի է։ Գրավոր խոսքն իրացվում է հատուկ մշակված գրային համակարգերի միջոցով։ Գրական լեզվի նորմաների տեսակետից այն սովորաբար լինում է ավելի կատարյալ, քան բանավոր խոսքը։

Մտածել՝ նշանակում է ոչ թե արտացոլել կամ արձագանքել արտաքինի ազդեցությանը, այլ հիմնվելով նախկին փորձի, զգացողական ճանաչողության արդի փորձի վրա «ստեղծել» նոր տրամաբանական ձևեր՝ հասկացողություններ, դատողություններ և եզրահանգումներ (ինդուկտիվ և դեդուկտիվ բնույթի)։ Այս պրոցեսը, որը կոչվում է ասոցիատիվ, կատարվում է մի շարք փուլերով՝ համադրում, համեմատում, անալիզ, սինթեզ, ընդհանրացում, կոնկրետացում, վերացարկում, որոնց արդյունքում էլ ձևավորվում են վերը նշված տրամաբանական կամ մտածողական ձևերը (հասկացողություն, դատողություն, եզրահանգում)։

Մարդու ստեղծագործական գործունեության ոլորտում կարևոր է երևակայությունը՝ վերջնական արդյունքի կերպարային պատկերացման հնարավորությունն ու պրոբլեմային իրավիճակի լուծման ծրագրավորումը։ Մտածողությունն իրականացվում է ֆորմալ տրամաբանության օրենքներով՝ նմանակում, երրորդն ավելորդ է, բավարար հիմքեր։

- Մարդու պրակտիկ գործունեության մեջ անմիջականորեն ներգրավված երևույթների և առարկաների կապերի և հարաբերությունների արտացոլում (ճանաչում)։ Այն օգտագործվում է պրակտիկ

գործունեության ընթացքում առաջացող խնդիրների լուծման ընթացքում:

- Հիշողությունում պահպանված զանազան երևույթների և առարկաների պատկերների հարաբերությունների և կապերի ճանաչում (արտացոլում):
- Հասկացողություններն օգտագործելու միջոցով ճանաչել առարկաների և երևույթների միջև եղած կապերն ու առնչությունները: Մտածողության այս ձևի միջոցով բացահայտվում են այնպիսի երևույթներ, օրինաչափություններ, պատճառահետևանքային կապեր, որոնք չեն ենթարկվում զգացողական, ակնառու-գործնական և պատկերային ճանաչողությանը: Մտածողության հենց այս ձևն է, որ թույլ է տալիս մարդուն ճանաչել բնության և հասարակության ամենախորքային և թաքնված կապերն ու հարաբերությունները: Այդ իսկ պատճառով մտածողության այս ձևն անվանում են նաև տեսական:

Հասկացությունները մտածողության ձևերի հիերարխիկ շարքում առաջինն են: Դրանք արտացոլում են երևույթների կամ առարկաների ամենակարևոր և էական հատկությունները: Տարբերում ենք հասկացության երկու ձև՝ վերացական և կոնկրետ:

Երեխայի խոսքի ձայնի հետազոտություն՝ հանդիսանում է կարևոր օղակ խոսքային գործունեության ընդհանուր հետազոտության մեջ: Մի հետազոտություն է, որը ներառում է երեխայի խոսքի, ձայնի կարևոր տարրը ընդհանուր համակարգում սովորելու գործունեությունը: Չնայած այն հանգամանքին, որ այս հետազոտությունը վաղուց նկարագրված է գրականության մեջ, որպես խոսքի թերապիա, այն միշտ չէ, որ տեղի է ունեցել պատշաճ մակարդակով: Գլխավոր թերությունը պրինցիպիալ մեթոդական բնույթն է: Դա պայթյուն է խոսքի հնչունային և իմացական կողմերի:

Հնչյունակազմական կամ արտասանական (արտիկուլյացիոն) հետազոտությունն ուղղված է լեզվի հնչյունների կազմավորման և արտասանական (բնախոսական) հատկանիշների ուսումնասիրությանը: Ֆոնոսկոպիայում բանավոր խոսքը սահմանվում է որպես դպրոցականի անատոմիական-ֆիզիոլոգիական գործունեության արդյունքում առաջացող ձայնային ազդանշան: Այդ ազդանշանն առաջացնող գործունեությունն իրականացվում է անձի կենտրոնական նյարդային

համակարգի և խոսքային ապարատի կողմից՝ կատարելով օդային միջավայրի կազմավորման, ձայնակազմավորման (ֆոնացիայի) և հնչյունակազմավորման (արտիկուլյացիայի) ֆունկցիաներ:

Ֆոնոսկոպիական հետազոտության մյուս եղանակը բանավոր խոսքի տեխնիկական հետազոտությունն է, որն այլ կերպ անվանվում է նաև տեխնիկական հնչյունաբանական կամ ձայնաբանական (ակուստիկական) հետազոտություն: Այն բանավոր խոսքի ֆիզիկական հատկանիշների ուսումնասիրությունն է համապատասխան տեխնիկական միջոցների գործադրմամբ՝ լաբորատոր պայմաններում:

Մենք հաղորդակցման տարբեր ձևեր ենք ընտրում, կախված նրանից, թե մենք զրուցում ենք մեկի հետ ինտերնետի միջոցով, կամ գնացել ենք հարցազրույցի: Յուրաքանչյուր դեպքի համար գոյություն ունեն հաղորդակցման համապատասխան ձևեր, որոնք սպասելի է զրուցակցի կողմից:

Ի.Պ. Պավլովը նշում է, որ բառը երեխայի համար գրգռիչ է: Լեզվին տիրապետելու ամենասկզբնական պահերին այն երեխայի առջև հանդես է գալիս իր նյութական, հնչյունային կողմով: Հենց այդ կողմով է պայմանավորված երեխայի կողմից առաջին բառերի իմաստի յուրացումը:

Այն հսկայական աշխատանքը, որ կատարում է երեխան՝ սովորելով տարբերակել մի բառը մյուսից, առաջին հերթին աշխատանք է լեզվի նյութական, հնչյունային կողմի վրա:

Խոսք, մարդու հաղորդակցական գործունեության տեսակներից, երբ լեզվի միջոցով արտահայտում ու այլ մարդկանց է հաղորդում իր մտքերը:

Առաջացել է կոլեկտիվում՝ որպես համատեղ աշխատանքային գործունեության կոորդինացիայի միջոց: Հոսքային միջոցներն այդ պրոցեսում աստիճանաբար կորցրել են իրենց «բնական» տեսքը և դարձել արհեստական ազդանշանների համակարգ:[2]

---

[2] 1.Նալչաջյան Ա. << Հոգեբանության հիմունքներ>>, Երևան 1991թ.
2.Պետրովսկի Ա. Վ. << Ընդհանուր հոգեբանություն>>, Երևան 1974թ.
3.Карл Кениг, Георг Фон Арним, "Понимание речи и лечение речи", 2013

Եզրակացություն

Խոսքային գործունեության ֆիզիոլոգիական հիմքը մի քանի ֆունկցիոնալ համակարգությունների բարդ կազմավորում է, որոնցից մի քանիսը մասնագիտացված են որպես խոսքային, իսկ մյուսները «սպասարկում» են գործունեության այլ տեսակների։ Այդ կազմավորումներին մասնակցում են ինչպես «ագդակ-հակագդում» տիպի պարզագույն ֆիզիոլոգիական, այնպես էլ առանձնահատուկ մեխանիզմներ, որոնք հիերարխիկ կառուցվածք ունեն և բնորոշ են բացառապես խոսքային գործունեության բարձրագույն ձևերի համար, ինչպիսին է խոսքային արտահայտության ներքին ծրագրավորման մեխանիզմը։

Խոսքային գործունեությունն ունի հոգեֆիզիոլոգիական բնույթ։ Դա մարդկային օրգանիզմի և ամենից առաջ ուղեղի աշխատանքն է ՝ ուղղված յուրացված լեզվի օգտագործմանը հաղորդակցման նպատակով։

Մարդիկ հաճախ կենտրոնանում են իրենց ասելիքի վրա, բայց արդյունավետ հաղորդակցման համար պետք է քիչ խոսել և շատ լսել։ Լսել լավ, նշանակում է ոչ միան պարզապես հասկանալ բառերը կամ տեղեկատվությունը, այլ նաև ընկալել այն էմոցիաները, որը փոխանցում է զրուցակիցը[5]։ Շատ մեծ տարբերություն կա կլանված լսելու և պարզապես լսելու միջև։ լսելու պարագայում հասկանում ես դիմացինի ձայնային ինտոնացիայի նրբությունները, որը պատմում է, թե ինչ է զգում տվյալ անձը և այն զգացողությունները, որ նա ցանկանում է փոխանցել։ Կենտրոնացված լսելու պարագայում ոչ միայն բացահայտվում են զրուցակցի հոգեվիճակն ու տրամադրությունները, այլև նա դառնում է լսված և հասկացված, ինչն էլ իր հերթին օգնում է կառուցել ավելի ուժեղ, ավելի խորը կապ միմյանց միջև։ Այս կերպ հաղորդակցվելով՝ նվազեցվում է նաև լարվածությունը, սթրեսը, ստեղծվում է ֆիզիկական և էմոցիոնալ հանգստություն։ Երբ զրուցակիցը հուզված է ու լարված, ապա ուշադիր լսելով և հանգիստ վարքագծով շփվելով՝ նա ևս կդառնա հանգիստ, լսված և հասկացված։ Եթե հաղորդակցման ընթացքում զրուցակցի նպատակն է դիմացինի հետ հասկացված ու լսված լինելն է, ապա ուշադիր լսելը հաճախ ինքնաբերաբար և բնական է ստացվում։ Եթե այդպիսի նպատակ չկա, ապա անհրաժեշտ է հետևել ներքոնշյալ քայլերին։

Օգտագործված գրականության ցանկ

1. Նալչաջյան Ա. << Հոգեբանության հիմունքներ>>, Երևան 1991թ.
2. Պետրովսկի Ա. Վ. << Ընդհանուր հոգեբանություն>>, Երևան 1974թ.
3. Карл Кениг, Георг Фон Арним, ''Понимание речи и лечение речи'', 2013